Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18933
18934

18935

Վ. Փափազյան

1. Թօփալ: - Տփղիս 1890

2: Ե. Շինուշվիլին

Գոգիա Ռիշվիլի - Թիֆլիս 1905

3. Վ. Փափազյան

Սասունցի Օհան

Մոսկվա - 1892

անգ. 3
891.99
Փ-31

391-99

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՍԱՍՈՒՆՑԻ ՕՀԱՆ

(*Թիւրքահայերի կեանքից*)

Մի իրական պատմութիւն

ՄՈՍԿՈՒԱ.

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ.

1892

(36)

4389

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 10 Декабря 1891 г.

10077-57

Типографія М. Бархударянъ, Мясницкая, д. наслѣд. Ананова.

ՍԱՍՈՒՆՑԻ ՕՀԱՆ

(ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ)

ՄԻ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա.

Բաղէշի առաջնորդական փոխանորդը եկեղեցիից առաջնորդարան մտնելու ժամանակ, դռան վրայ տեսաւ սպիտակ սաւանով ծածկուած մի կին, որ կծկուել էր մեծ փեղկի եաւեր և դողում էր, երեսը թէև ծածկել էր, բայց երևում էին նրա գեղեցիկ սեւ-բակ աչքերը և կարմիր-դէր թշերի մի մասը:

Առաջնորդական փոխանորդը անշուշտ առանց տեսնելու կ'անցնէր, եթէ կինը փեղկի եաւից դուրս չեգար և մի խոր գլուխ չտար նրան:

—Ի՞նչ ես ուզում, քոյր, հարցրեց սրբազանը կանգ առնելով:

Խեղճ կինը սկսեց դողալ, երեսը աւելի ծածկեց և կմկմալով.

—Սրբազան,—ասաց,—ես հայ կին եմ․․

—Գիտեմ որ հայ ես, ասաց խստութեամբ սրբազանը—յետո՞յ...

—Ես... ես... թոթովեց կինը,—մոռացել եմ հայերէնը...

—Խե՛նթ ես, քոյր, գոչեց նա.—ինչպէս թէ հայերէնը մոռացել ես:

—Սրբազան, խօսեց այս անգամ կինը, թէև կմկմալով, թէև կէսը հայերէն և կէսը թուրքերէն, բայց փոքր ինչ վստահ կերպով,—սրբազան, վեց տարի է, որ քիւրդ Ղուրբան աղան փախցրեց ինձ մեր գիւղի աղբիւրի մօտից... տարաւ ինձ Թուրք շինեց... ասաց որ կըպսակուի ինձ վրայ... ինձ խաբեց... ինձ շա՜տ ծեծեց... ամեն օր կըծեծէ... զիս կըչարչրէ․․ կըսէ «միւսլիման օլ»... կըսէ «խաչը քփրէ»... զիս իր միւս կնոջ ձեռքը կուտայ, որ մազերէս կըքաշէ... զիս... զիս... իր բարեկամներուն կըծախէ... Սրբազա՛ն, ոտքդ եմ ընկեր... ես էլ քրիստոնեայ եմ, ես էլ հայ եմ... ազատէ զիս անօրէնի ձեռքէն...

Եւ սկսեց սաստիկ արտասուել:

Սրբազանը դէմքը խոժոռեց, պահ մի մտածեց և ապա ասաց.

—Քոյր, ասաց,—ո՞ւր աղջիկն ես:

—Սրբազան... Մշոյ Խաս գիւղի Մլքընց Գասպարի աղջիկն եմ, չըգիտեմ թէ ի՛նչ եղան հայրս... մայրս... վեց տարի է․․․

—Ճանաչում եմ հօրդ, ասաց սրբազանը, — երկու տարի է, որ մեռել է․․ անունդ Մարիա՞մ է․․․

—Հրամմէք ես... հեկեկաց խեղճ կինը և հօր մահը լսելով, սկսեց այս անգամ աւելի դառնապէս արտասուել:

—Հըմ... խօսեց սրբազանը,—ինչո՞ւ ես եկել ինձ մօտ:

—Սրբազան, գոչեց կինը աղիողորմ ձայնով,—զիս կըչարչրեն... զիս պոռնիկ են արել... զմէն մարդու ձեռք կուտան... զիմ տղան կըծեծեն... ախուր մէջ կըպառկեցնեն... չեն թողներ, որ երեսը տեսնեմ... իմ առջևս խաչը կ'անարգեն... Սրբազան, վերև Աստուած, ներքև դու, քեզ եմ ապաւիներ — ազատէ զիս:

—Հըմ... պատասխանեց խոժոռ դէմքով սրբազանը,—քոյր, ես ոչինչ չեմ կարող անել... էլի վերադարձիր ամուսնոյդ մօտ... համակերպիր․․ համբերիր... Աստուած ողորմած է․․․

—Սրբազան... ճչաց կինը:

—Գնա՛, գնա՛... ես ոչինչ չեմ կարող անել:

Ասաց սրբազանը և պառնալով իւր ծառային.

—Գրի՛գոր, ասաց խստութեամբ, — այս կնոջը ներս չըթողնես․․

Հաղիւ թէ այդ խօսքերը ասելով նա ներս էր գը-
նում, որ առաջնորդարանի դռնից ներս մտան երկու
երիտասարդներ և տեսան թէ ինչպէս խեղճ կինը
ուժասպառ և հեկեկալով ընկնում էր դրան մօտը
դրուած խարխուլ նստարանի վրայ. . .

Երիտասարդները հետաքրքրութեամբ մօտեցան
կնոջ.

—Ո՞վ ես դու, կի՛ն, հարցրեց նրանցից մէկը,—
ինչո՞ւ ես լաց լինում. . .

—Աստուած ինձ կըպատժէ... հեկեկաց կինը,—
քիւրդերը զիս փախցուցին... ես հազար նեղութիւ-
նով կըխալսիմ, կըգամ սրբազանին քով... զիս կը
փոնդէ, գնա, կսէ, յափշտակողիդ մօտ... գնա նորէն
ակամայ պոռնիկ եղիր, կըսէ... ո՜վ Աստուած. . .

Երիտասարդները միմեանց երեսին նայեցին, յետոյ
դառնութեամբ արտասուող կնոջ, յետոյ փոքր ինչ
յետ քաշուեցան և մէկը ասաց միւսին.

—Սեդրակ, սրբազանից ամէն ինչ սպասելի է. . .
կ'ընդունես դրան մի քանի օր խնամել, մինչև որ իւր
ծնողաց մօտ հասցնենք...

Սեդրակը պահ մի մտածեց, յետոյ առանց պա-
տասխանելու նրան, մօտեցաւ կնոջ և ասաց.

—Վեր կաց, քոյր, գնանք մեր տուն... մի կտոր
հաց ունեմ, կէսը քեզ կըտամ... կինս քեզ կըխնա-
մէ, մինչև որ տեսնենք ինչ կըլինի. . .

—Աստուած ձեզ պահէ, գոչեց կինը ուրախու-

թեամբ ոտքի ելնելով...—Աստուած ձեզ կեանք տայ...
քիւրդի ձեռքը չըձգէ... զիս կըծեծէին... վեց տարի
է, ինչե՜ր կըքաշեմ... զաւակս խլեցին թիւրքացրին...
խաչը կըքփրեն... կըթքեն երեսիս... պատու ջաղաւ-
մազ չըթողեց վրաս. . .

Երիտասարդները տխրութեամբ լսում էին նրան:

—Գնանք, ասաց Սեդրակը մեղմաղձութեամբ,—
գնանք, քո՛յր...

Բ.

Բաղէշի արևմտեան կողմից սկսած մինչև Տատախ
և մինչև Մուշ սփռվում է բարձրագագաթ և ապա-
ռաժոտ լեռների ձիւնապատ կոյտեր, ցից-ցից խու-
թեր, միապաղաղ անելանելի ժայռեր, մշուշապատ
վայրենի խոժոռութեամբ բլրակներ շրջապատում են
այդ բարձր լեռները, որոնց վրայ բնակվում է մի
քաջ, հսկայ, առողջ և կայտառ ժողովուրդ:

Այդ լեռները կոչվում են Սև լեռներ, հայերը կո-
չում են նրան Սասուն, թիւրքերը Գէվէռ և հին
ժամանակ լեռնային այդ բարձրադիր գաւառը կազ-
մում էր Աղձնեաց աշխարհի մի կարևոր մասը:

Մի բուռ ժողովուրդ այժմ բռնում է այդ ձիւ-
նապատ կոյտերի մէջ շինուած գիւղերը, այդ ժողո-
վուրդը բաղկացած է միշտ սևադէմ, միշտ թաւամազ,

միշտ կոշտ գծագրութեամբ յաղթանդամ անձերից, որոնց մօտ ոչ մի ահռելի իր չըկայ, որոնց համար վախը գոյութիւն չունի և որոնք իրենց խարուկներով, յենած ցուպերի վրայ սահում են ապառաժների վրայից, բարձրանում են, իջնում են, ցատկոտում և սրընթաց կերպով անհետանում են խութերի ետևներում, որտեղ են, հաւաքում են և ամեն միջոց 'ի գործ են դնում ապրելու... և ապատ ապրելու. . .

Այդ, կարելի է ասել, յաւիտեան ձիւնապատ լերանց բնակիչները չեն սիրում երկար ճանապարհով գնալ, երբ ապառաժների վրայից գնդակի պէս ցած սահելը կարելի է. չեն սիրում գերի ընկնել, երբ ազատ ապրելը կարելի է. չեն սիրում զէնքից բաժանուել, երբ զէնքը նոցա որս և ազատութիւն է տալիս. . .

Ճանապարհորդում են երկու տեսակ. կամ խարուկ կոշիկներով և կամ քէղախիկ բաճկոնակի վրայ նստած:

Խարուկը մի մեծ կոշիկ է, երեսը այծի մաշից գործած, իսկ ոտքի տակը կանեփից խիտ առ խիտ հիւսած տախտակի կոշտութեամբ և բևեռած ամեն կողմից. առնում են ցուպը ձեռքերին, յենում են նրա վրայ և ապառաժներից արագութեամբ ցած սահում: Մեծ մասամբ սիրում են քէղախիկով իջնել, որովհետև թէ աւելի արագ կարելի է գնալ և թէ անվտանգ:

Քէղախիկը այծի մորթից շինած մի կարճ բաճկոնակ է, եղերքները ասեղնագործած ոսկեթելով. գործում են աւելի Շատախում: փռում քեազախիկը ձիւնի վրան, նստում են, իրենց բաց թողնում և ձեռքի ցուպը այս կողմ այն կողմ ցցելով ուղղում են իրենց կորցրած հաւասարակշռական դիրքը և այսպէս նրանք հինգ բոպէի մէջ հազար ոտնաչափից աւելի մի ապառաժի գլխից իջնում են ձորակը: Թէև կան ճանապարհներ գէպի Սասնոյ բերդը, գէպի գիւղերը, սակայն այնչափ նեղ են, այնչափ վտանգաւոր, որ ոտով միայն կարելի է բարձրանալ և կամ շատ շատ ջորիով և էշով, այն էլ առանց վրան նստելու պայմանով:

Այս է պատճառը, որ իրենք—լեռնականները աւելի լաւ են համարում ժանիքաւոր ձողերը ցցել խութերի, ձեղքուածքների մէջ, մագլցել նրանց վրայից գէպի խութը, այնտեղից ձողը մի ուրիշ ձեղքուածքի ձգել և մարմնամարզական ամենատարագ մագլցումով կէս ժամուայ մէջ 5—6 ժամուայ ճանապարհ բարձրանալ . .

Չեն սիրում գերի լինել, որովհետև ոչ ոք դեռ ևս համարձակուեցաւ մագլցել լերանց գագաթների վրայ և հասկացնել նրանց թէ ի՞նչ է գիտութիւնը:

Չեն սիրում և զէնքից բաժանուել, որովհետև դաշտի քիւրդերը նրանց անպատար ամենալաւ հրացաններ են հայթայթում... Կամքով թէ ակամայ

տալիս են նրանց և սոսկում են, եթէ մի սասունցի մուտք գործէ իրենց գիւղերի մէջ...

Վայրենի սև դէմքը, երկայն, խառն ի խուռն գլխի վրայ գիզուած և լայն թիկունքների վրայ փռուած մազերը, թանձր խիտ մօրուքը, հրացայտ մեծ աչքերը, կեռ ահագին քթերը, հուժկու բազուկները, լայն կուրծքը, վերջապէս նրանց այծի մորթէ բրդոտ հագուստը, երկար նիզակը և թեւին ձգած հրացանը սարսափ են ազդում նրան, ով մի անգամ կըտեսնէ մի Սասունցիի և կըկրէ նրա ակնարկը...

Ոչ ոք չըկարծէ թէ այս ահռելի բարձր և ձիւնապատ լեռները չեն արտադրում ոչ մի բերք, որովհետև ամեն երկու ցից ժայռերի մէջ տեղում փըռվում է մի-մի սև հողով արդաւանդ ձորակ, ուր լեռնականները արտադրում են իրենց նման անյաղթ ոգեղներով խաղող՝ ընկուզաչափ հատերով... Այդ խաղողից պատրաստում են ամենահամեղ և լաւ գինի... չորս կողմը սփռուած նռենիներից քաղում են անուշահամ նուռը, մրկիթներից ոլոռնաձև մրկիթը, որը չորցնելով, աղալով և շաղախ կազմելով պատրաստում են իրենց համար կերակուրներ... ցանում են կանեփ, արտադրում են նաև լաւ մեղր և այդ բոլորը Մուշ տանելով փոխարկում են ցորենի հետ:

Դրամը այդ լեռների մէջ գոյութիւն չունի և վայ նրան, ով կըմտածէ Սասունցուն դրամի խաղալիք շինել...

Ունին նաև ոչխարներ և տուլի այծեր, ջորիներ և էշեր, որոնցով հերկում են հողը:

Ոչ մի տուրք չեն տալիս, ոչ մի հարկահան կամ տասանորդահաւաք չէ մտնում այդ լեռների մէջ. նշանաւորապէս գործ չունի այդ կողմերում, ոչ ոք նրանից չի նեղացնում հարկերով...

Եւ սակայն նոքա վճարում էին հարկ:

Այնտեղ բարձրում, մի ցից լերան վրայ, մշուշի մէջ երևում էր Սասնոյ բերդը, ուր նստում էր մի անձ և որին իւրաքանչիւր Սասունցի պարտք էր համարում տանել իւր բերքից մի մաս, հնազանդել նրա հրամաններին, դիտել նրա մատի շարժուածքը և սրան միայն վճարել իւր կամաւոր հարկը:

Այնտեղ տարիներից ի վեր նստում էր մի յաղթանդամ հսկայ, որը ունի մի ամենապարզ անուն:

Օհան էր կոչվում նա և իւր ախաղոսով՝ Սասունցի Օհան:

Գ.

Սասունցի Օհանը մի երկարահասակ անձն էր խոշոր քթով, կրակ ցայտող աչքերով, ջլապինդ բազուկներով, լայն կուրծքով և երկար ոտներով. հագնում էր մանուսայէ մի կարճ արխալուղ, որոյ քղանցքը նա ժողովում դնում էր լայն շալէ շալ-

վարի մէջ, արխալուղի վրայ կրում էր ոսկեթելով պերճօրէն ասեղնագործած մի քեաղալիկ. մէջքին կրում էր լայն գօտի, որի մէջ ամէն կողմից խրուած ունէր դաշոյններ և ատրճանակներ, իր երկար և թանձր մազերի վրայ կրում էր մի քէօլօզ փաթաթուած մետաքսեայ եազմաներով և այս բոլորի վրայ նա հագնում էր անթև թաղեայ կէպէնիկը —վերարկուն, երբ կամենում է դուրս ելնել:

Բնաւորութիւնը շատ քաղցր էր. չէր սիրում քաղաքավարական ձևերի և ոչ մի կարգը, խօսում էր շատ բարձր ձայնով բերանը մեծ բացած, ամէնքին դու էր ասում, ամէնքին մարդ էր կոչում, ամէնքի մօտ նա նստում էր ինչպէս որ կամենում էր, խօսում էր —ինչ որ մտածում էր, հայհոյում էր ծանր կերպով, վատին համարձակ ծեծում էր, լաւին անկեղծօրէն և պարզութեամբ գովում և սիրում... չէր սիրում վատ անձերին, չէր ախորժում քիչ ուտելուց, չէր սիրում ցած ձայներ, չէր ախորժում թոյլ անձերից, որովհետև ինքը մի ձեռքով ահագին ապառաժներ էր շարժում տեղից... չէր ամաչում ոչինչ բանից, միայն պաշտում էր Աստուածը, հաւատում էր «Իսուս Քրիստոսին»... չըգիտէր ինչ ասել է վախը, դողութիւնը, աւազակութիւնը, կեղտոտութիւնը, որովհետև նա ինքը ակամայ աներկիւղ էր, ազնիւ բարեսիրտ և վեհանձն... Նրա համար հաւասար էին գիւղացին և քաղաքա-

ցին, մշակը և փաշան... սակայն մի բան, որի համար պարսաւում էին նրան, այն էր, որ Օհանը շատ ջերմեռանդ էր կրօնքի մէջ, նախանձախնդիր, բարեպաշտ, ամէն բան զոհող վանքերի և եկեղեցիների պահպանութեան համար... մի խօսքով նա քրիստոնեայ էր բառի բուն նշանակութեամբ. յարգում էր կրօնաւորներին, բայց դեռ հինգ տարի չըկայ, որ նա ծեծելով վռնդեց լեռներից Կարապետ հայր սուրբին, որը պաղլի համար իր ծառայի շալակն էր առել մի այրի կնոջ և ինքը բարակ փայտով ծեծում էր նրան...

Այսպէս էր Սասունցի Օհանը, որին սիրում էր իւրաքանչիւր սասունցի և նրա մի մատի շարժուածքը կարող էր բոլորին իր շուրջը ժողովել..

Օհան էին կոչում նրան լեռնցիք, «մեր Օհանն» էին անուանում կանայք. «Սանոյ բէգ» էին ճանաչում քիւրդերը և «Յովհաննէս քէհա» էին կոչում հայ քաղաքացիք...

Վա՜յ նրան, ով կըգրգռէր Օհանի բարկութիւնը, որովհետև նա, իր այնչափ բարութեամբ հանդերձ, սաստիկ բարկացկոտ էլ էր... կըփշրէր ամէն ինչ իսկոյն շուրջը կըժողովէր իր հինգ հարիւրից բաղկացած մարթինի հրացանաւոր զունդը, կայծակի արագութեամբ դաշտը կ'իջնէր և հողի հետ կըհաւասարեցնէր քիւրդի այն գիւղը, որը կըհամարձակուէր նրան դիմադրել:

Հենց այդպիսի արշաւանքից նոր վերադարձել հանգըստանում էր Օհանը, երբ եկան յայտնեցին նրան, որ Բաղէշից մի հայ գալով բերդը, խնդրում է իսկոյն տեսնել Օհանին։

—Ո՞վ է, հարցրեց Օհանը։

—Տէր Մարկոսենց Միհրան էֆէնդին է։

—Հա՛, ժպտեց Օհանը,—մեր Սերովբ աղայի որդի՞ն... կանչեցէք, կաչեցէք...

Եւ ծալապատիկ նստեց օթոցի վրայ։

Պահ մի յետոյ սենեակն էր մտնում մի երիտասարդ։

—Բարի եկար, դոչեց նրան Օհանը,—արի նստի՛ր։

—Աստուծոյ բարին, Օհա՛ն, մոտեցաւ երիտասարդը,—քեզ մոտ խնդիրքի եմ եկել։

—Լաւ, լաւ, ծիծաղեց Օհանը,—առաջ մէկ նըստիր, հօրդ մասին խօսիր... ինչպէս է ծերը, առողջ է...

—Առողջ է։

—Է՛, Խաթո՞ունը ինչպէս է։

—Լաւ է, բոլորն էլ ողջ առողջ են։

—Կնիկդ էլ խօ լա՞ւ է,—աղայ չունի՞ս։

—Չէ... բայց շուտով կ՚ունենամ...

—Լաւ... ես քեզ չեմ տեսել, բայց հօրդ լաւ եմ ճանաչում, հետը առևտուր ենք ունեցել... հայրդ լաւ մարդ է... դո՛ւ ինչպէս, խօ վատ աղայ չես...

—Ի՞նչպէս վատ, հարցրեց ծիծաղելով Միհրանը։

—Հը՛մ, այսինքն խօ շուն չես, խօ չես վախենում քիւրդերից...

—Ուրեմն օվ որ վախենայ նա շո՞ւն է...

—Շունը ուրիշ բան է, ծիծաղեց քէհեան,—մենք շուն կոչում ենք փողի համար հոգի տուող վախկոտ աչքերով և գլուխը միշտ կախած ու կարծես գետնի ու ծառերի վրայ ոսկի փնտռող անասուածներին...

—Իսկ քիւրդերից վախեցողին ի՞նչ էք կոչում։

—Քիւրդերից վախեցողնե՞ն... ծիծաղում ենք վրան. չըլինի դու էլ վախկոտ ես. ես չեմ սիրում վախկոտներին...

—Եթէ վախկոտ լինէի, ժպտեց Միհրանը,—մենակ չէի կարող Բաղէշից այստեղ գալ։

—Հա՞... լաւ, լաւ, տպա՛ տես տեսնենք, ի՞նչ գործ ունես մեր սարերում։

Միհրանը շտկուեցաւ, նրա դէմքը տխրեց և նա մի հառաչ արձակելուց յետոյ՝ ասաց.

—Օհան, լսիր, քեզ մի վատ պատմութիւն պատմեմ։ Սրանից մէկ ամիս առաջ, երբ իմ բարեկամ Սեդրակի հետ առաջնորդարան էինք մտնում՝ նրա դռան վրայ ընկած տեսանք մի հայ կնիկ...

—Վա՛հ, դոչեց զարմացած Օհանը,—կնիկը ի՞նչ գործ ունէր այնտեղ։

—Լսիր պատմեմ, շարունակեց Միհրանը,—դու ճանաչո՞ւմ ես Ռահվայ հովտի Մորխ գիւղացի քիւրդ Դուրբան աղային։

—Ղուրբան աղայի՛ն... հա՜յ-հա՜յ, ինչպես չէ. շանը մեկն է և նրան պես էլ փախկոտ:

—Հա, ուրեմն այժմ լսիր... Սրանից վեց տարի առաջ այդ աղան Մշոյ Խաս գիւղից փախցնում իւր գիւղն է բերում Մլքոյենց Գասպարի սիրուն աղջիկը:

—Ծօ, որոտաց Օհանը, — այդ շունն է փախցրել, վայ իշու աշխարհ: Ծօ, այդ շունը հայ աղջի՞կ փախցնէ... է՛, յետոյ, շուտ ասա վերջացուր, թէ չէ, քիչ է մնացել որ հէնց հիմա ձի հեծնեմ գնամ այդ շանը վիզը ոլորեմ:

—Սպասի՛ր, ժպտեց Միհրանը և շարունակեց.— աղջկան մի առ ժամանակ պահելուց յետոյ, խաբում է, թէ իրեն կին կ՚անէ, յետոյ երբ ոտի է լինում, սկսում է նրան ստիպել հաւատքը ուրանալու... ծեծում է անդադար, հայհոյում է Խաչին, ամեն տեսակ կեղտոտ խօսքեր է ասում, տալիս է նրան իւր միւս պառաւ կնոջ ձեռքը, որը նրա բոլոր մազերը պոկ է տալիս գլխից:

Օհանի աչքերը արիւնով լցուել էին, նստած տեղումը ոստոստում էր և հազիւ էր կարողանում իրեն զսպել:

—Այո, շարունակեց Միհրանը, — այդ բոլորը անելուց յետոյ կնոջը սկսում է տալ իւր բարեկամներին և գործ ածել ինչպես մի պոռնիկի, իսկ նրա որդուն խեղճին սիւնէթ են անում և թրքացնում:

Խեղճ կինը մի օր հազիւ կարողանում է փախչել գիւղից. վեց ժամ անընդհատ վազում է գիշերով և միւս օրը Բաղէշ է հասնում առաջնորդից օգնութիւն խնդրելու:

—Բաւական է, գոռաց Օհանը վեր թռնելով տեղից,—աղա՜յք, Մկօ, Ակօ, Մուրա՛դ:

—Ի՞նչ ես անում, բռնեց նրա թեւերը Միհրանը:

—Ձիերը թամբէն, գոչեց Օհանը, — սաղ գիւղը կրակ պիտի տամ...

—Սպասի՛ր, ասաց Միհրանը ստիպելով նրան նստել,—դեռ չվերջացրի, լսիր մնացածը...

—Է՞լ կայ, մռնչեց Օհանը,—էլ ի՞նչ պիտի լինի դրանից աւելի...

—Աւա՜ղ... էլ կայ, ժպտեց տխրութեամբ Միհրանը,—լսիր:

—Ասա ուրեմն, շուտ ասա...

—Կինը գալիս է առաջնորդարան, շարունակեց Միհրանը, —պատմում է ամեն ինչ առաջնորդին. Սրբազանը իսկոյն ճանաչում է աղջկան բայց... վռնդում է նրան առաջնորդարանից ասելով որ «գնա նորէն քո մարդիդ մօտ, համբերիր և համակերպիր»...

—Ի՞նչ է, ասաց Օհանը կատարեալ ապշած,— Սրբազա՞նը... ծօ, հանա՞ք ես անում, աղա՛յ, սրբազանը վռնդել է...

—Այո, վռնդեց նրան այն ժամանակ, երբ ես և Սեդրակը առաջնորդարան էինք մնում:

—Վայ իշու աշխարհք, մինչեւ Օհանը, — դեռ է՞լ կայ։

—Դեռ էլ կայ։ Սեդրակը վերցրեց կնոջը իր տունը, հագցրեց նրան և մինչդեռ ուզում էր նրա ծնողներին իմաց տալ՝ յանկարծ ոստիկանները շըրջապատում են տունը, Սեդրակին բանտ են տանում, իսկ կնոջը նորէն ուղարկում են քիւրդ աղայի մօտ։

Եւ այդ անել տուողը Բաղէշի սրբազանն էր, ինչպէս որ ոստիկանները ինձ ասացին։

Եւ լսեց, բայց զարմացած մնաց, երբ տեսաւ, որ փոխանակ Օհանը կատաղելու, միայն սաստիկ գունաթափուել էր և հաստ շրթունքները սաստիկ դողում էին։

—Վերջացա՞ւ, պատասխանեց Միհրանը։

Այն ժամանակ Օհանը ոտքի ելաւ, մօտեցաւ սենեակի դուռն, բաց արաւ — և խռպոտ մռնչիւնով համարեա թէ ոռնաց.

—Մկլօ՛. . .

Բակի մէջ կանգնած լեռնականներից ծերունին զատուեցաւ և հսկայական քայլերով մօտեցաւ։ Մի կարճահասակ, բայց հուժկու ծերունի էր Օհանի պէս հագնուած, միայն թէ գլուխը բաց էր, երկար մազերը խառն ի խուռն դիզուած էին նրա գլխի և փռուած էին ուսերի վրայ, մէջքումը խրած ունէր մի լայն բերնով տապար և աջ ձեռքում (որոյ միջին մատը կտրուած էր) բռնած ունէր մի երկայն նիզակ։

—Մկլօ՛, գոչեց նրան Օհանը,—ներս արի։

Եւ ծերունիի հետ սենեակը մտան։

—Շուտ ձի կըհեծնես և երկու ժամուայ մէջ Ռահվայի դաշտի Մորխ գիւղը կ'երթաս, Ղուրբան աղային կ'ասես, որ Օհանը ուզում է իր մօտ ունեցած հայ կինը և տղան, և այդ երկուսի ապրուստի համար քսան սոմար ցորեն, վեց կով, չորս եզ, մի էշ և քսան հատ օսմանցու ոսկի։ Բառնան ցորենը և տաւարները, կնոջ, տղայի ու ոսկիների հետ լեռը ուղարկեն. իմացա՞ր, առանց դրանց ետ չը դառնաս։

—Հրամանք ես, գոչեց Մկլօն և անհետացաւ։

Միհրանը զարմացած Օհանին էր նայում։

—Օհան, ասաց նա ապշած,—չե՞ս խենթացել խօ։

—Ե՞ս խենթանամ, ծիծաղեց ջղաձգութեամբ Օհանը,—եթէ Օհանը խենթանայ, ապա ո՞վ կ'ոլորէ Ղուրբան աղայի վիզը։

—Բայց այդ մարդուն մենակ ուղարկելդ. . .

Օհանը միայն ծիծաղեց, յետոյ նորից դռան մօտ գնաց և դուրս պարզելով՝ գլուխը՝ գոչեց.

—Մուրադ. . .

Այս անգամ մօտեցողը մի երկարահասակ երիտասարդ էր, որը ներս մտաւ և լռութեամբ սպասեց։

—Ձի կըհեծնես, ասաց նրան Օհանը, — Բաղէշ կ'երթաս քսան ձիաւորով, այնտեղ բանտի մէջ Սեդրակ անունով մի նոր բռնուած տղայ կայ. երեք

օրից յետոյ այդ աղջիկն կ'ուզեմ այսաեղ տեսնել. հասկացար:

—Հրամանք ես:

—Սպասիր, սրբազանին էլ կրտեսնես և կ'ասես որ Օհանը ասաց. «Սրբազան, շատով քո պատգ էլ պիտի եփեմ...*) գէհ, գնա...

Մուրադն էս անհետացաւ:

Միհրանը զանվում էր կատարեալ ապշութեան մէջ:

—Այժմ, ասաց նրան Օհանը ժպտելով, — գնանք ինձ հետ:

Դ.

Ռահվայի հովիտը, որը Բաղէշից 4 ժամ հեռու հիւսիսային կողմն է զանվում, մի ընդարձակ դաշտ է, շրջապատուած լեռներով և բնակուած քիւրդերից:

Հովիտի սկզբում, Մշոյ դաւառին սահմանակից և Բաղէշից 6 ժամ հեռաւորութեան վրայ, մի ձորակի դլխին զանվում է Մորխ քրդաբնակ գիւղը, ուր և նստել տիրում էր Ղուրբան աղան:

Կէս գիշեր կը լինէր, երբ մի ձիաւոր սրարշաւ գիւ-

*) Այսինքն քո կերակուրդ էլ պիտի եփեմ — քո հոգիդ էլ կրնանեմ:

ղը մտաւ, ուղղակի այդ աղայի դռան առջև կանգնեցրեց ձին, ցած թռաւ նրա վրայից և հրացանի կոթովը ուժգնութեամբ բաղխեց դուռը: Փոքր ինչ յետոյ մի քիւրդ, ճրագը ձեռքին եկաւ և առանց դուռը բանալու՝ դռան ետևից հարցրեց.

—Ո՞վ է այն:

—Ղուրբան աղան տաճն է, հարցրեց ձիաւորը:

—Քնել է: Ի՞նչ ես ուզում, ո՞վ ես դու:

—Զարթեցուր աղայիդ և ասա նրան, որ Սասնոյ բէգից մարդ է եկել և մինչև երկու հարիւր համբելը՝ կրսպասէ նրան գիւղի աղբիւրի մօտ:

Ասաց, հեծաւ ձին, արշաւանքի հասաւ աղբիւրին, ցած իջաւ, ձիու սանձը թևին անց կացրեց, անթև թաղեայ վերարկուն գետին փռելով նստեց, Մարթինի հրացանի մէջ մի փամփուշտ կոխեց և սպասեց լռութեամբ:

Զրմռռացաւ համբելու ցած ձայնով:

Հաղիւ թէ հարիւրը համբել երկու հարիւրից էր սկսում, որ հեռուից երևեցաւ մի ճրագ, որը հետզհետէ մօտենում էր:

—Ո՞վ է այն, հարցրեց Մկլօն բարձր ձայնով և քիւրդերէն:

—Ղուրբան աղան է, լսուեցաւ մի վախկոտ ձայն:

—Լաւ, թող Ղուրբան աղան այնտեղ կանգնած լսէ ինձ, մօտ դալուն պէս հրացանաղարկ կ'անեմ: Լսի՛ր, Ղուրբան աղա, Սասնոյ բէգը հրամայում է

որ իսկոյն լեռը ուղարկես քո մօտը եղած հայ աղջկան իր աղայի հետ, իսկ նրան ապրեցնելու համար՝ քսան սոմար ցորեն, վեց կով, չորս եզ, մի էշ և քսան հատ օսմանցու ոսկի. բառնան ցորենը և շուտով լեռը ուղարկեն տաւարների, կնոջ, աղայի և ոսկիի հետ. լսեցի՞ր, Ղուրբան աղա՛:

—Լսեցի՛, գեաւո՛ւր, գոռաց մի ձայն և մի գնդակ վժժալով եկաւ անցաւ Մկլօի կողքից:

—Վա՛յ, գոչեց Մկլօն,—խաղո՞ւմ ես. . .

Եւ նշան առնելով ճրագին, հրացանը արձակեց. լսուեցաւ մի ճիչ, ճրագը մարեցաւ, նրան հետևեց մի հայհոյանք, յետոյ հրացանի միմեանց հետևող ձայներ, աղմուկ, շփոթ և մի րոպէի մէջ ամբողջ գիւղից քիւրդերը դուրս թափուած՝ խառնուեցին միմեանց:

—Գեաւուրին սպանէ՛ք... լսւում էր աղայի խըռպոտ ձայնը:

—Եթէ գեաւուրը քեզ չմորթէ, լսւում էր Մկլօի ձայնը, Մկլօն, որը մնած աղբիւրի մեծ քարի ետևում, անդադար գնդակ էր արձակում ձայները լսուած կողմը:

—Հը՛մ, մռմռում էր նա արձակելով,—այս շները ինձ մտադիր են պատառել արդեօ՞ք:

Յանկարծ մի որոտումի նմանող ձայն լսուեցաւ հեռուից, նաև մի քանի հրացանի ձայներ, հետզհետէ և ձիերի ոտնաձայներ, յետոյ քիւրդերի գիւղի

մէջ տեղը վառուած դէզի լոյսով երևեցաւ նախ Օհանը, որը վաղն ի վաղ մօտենում էր՝ կողքին ունենալով սուրը ձեռքին Միհրանը և ետևում հինգ հարիւրի չափ հերարձակ հրացանաւորներ:

—Լաւ եկար, ցատկեց դէպի նա Մկլօն, —կոտորենք դրանց:

—Կրակ, տղայք, որոտաց Օհանը:

Իսկոյն արձակուած հրացանների ձայնով, մուխով, ճիչերով, ոռնոցքներով և կատաղի գոռումներով լցուեցաւ գիւղը, ծուխը աներևոյթացրեց վառուող դէզի լոյսը... Օհանի լեռնցիք թափուեցան գիւղի մէջ սուր և տապար ի ձեռին և ամբողջ մի ժամ միայն հրացանի ձայներ, ճիչեր և ոռնոցքներ էին լսւում:

Յետոյ մի քանի տեղից երևեցան հրեղէն լեզուակներ և շուտով ամբողջ դաշտը լուսաւորուեցաւ վառուող գիւղի պատճառած լոյսից:

Երբ լուսանում էր, Սասունցիք կովեր, եզներ և ոչխարներ առաջն արած՝ յաղթութեամբ հեռանում էին պատերազմի դաշտից:

Իսկ գիւղը դեռ ևս վառվում էր և նրա փողոցներում ընկել էին բազմաթիւ դիակներ:

Ղուրբան աղան Օհանի ձեռքն էր ընկել ողջ և հայ կին Մարիամը իւր որդու հետ նստել մի ջորիի վրայ քայլում էին լեռնցիներով շրջապատուած:

Արեւը ծագելու ժամանակ Սասունցիք արդէն գտըն-վում էին առաջին բլրակի ապառաժոտ գագաթի վրայ, ուր Օհանը հրամայեց կանգ առնել և գոչեց Մկլօին.

—Մկլօ, ո՞ղջ է Ղուրբան աղան:

—Հրամանք ես, ողջ է:

—Լաւ... ափսոս են մեր սրերը... բեր նրան ձեռ-քերը և ոտները կապած և այս ժայռի գլխից գլո-րիր նրան ցած՝ որ երթայ գտնէ դաշտումը ցրուող իր գիւղի աւերակները:

Բոլորը լռութեամբ դիտում էին:

Մկլօն բերեց աղային, դրեց անդունդի եզերքը, յե-տոյ ոտքով հրեց նրան դէպի ցած և գոչեց.

—Երթաս բարև. . .

Ամենքը տեսան թէ ինչպէս Ղուրբան աղայի մար-մնի կտորները ցատկոտելով օդի մէջ՝ գնում ընկ-նում էին անդունդի յատակը. . .

—Գնանք, գոչեց Օհանը,—այժմ սրբազանի գործը տեսնենք:

Եւ ճանապարհ ընկաւ կարաւանը:

Սեպրակին բանտից հանել էր Օհանը և այժմ նա գտնվում է Սասնոյ լեռներում, իսկ սրբազանի համար պատմում են թէ, վախից, առանց հրաժարա-կան տալու, մի օր փախաւ Բաղէշից և երբ Վան էր հասել, հազիւ կարողացել էր փոքր ինչ ազատ շունչ քաշել:

Ասում են նաև, որ ծերունի Մկլօն, որը երկար տարի էր ամուրի էր մնացել՝ իրեն կին առեց Խոս գիւղցի Մարիամին:

Վ Ե Ր Ջ.

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА
ՀԱՍՌ Арм. ССР

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

10
18933
18934
18935
2013